ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ու Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

քաղ. Երևան «25» փետրվարի, 2022 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 03-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 15-ի N 204-Ա/2 հրամանով հաստատված «Գիտական միջոցառման և երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգի» 3-րդ մասը, ինչպես նաև գիտական միջոցառման և երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գիտական միջոցառման և երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտերը գնահատելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին՝
   1) գործունեությունն իրականացնել նիստերի միջոցով,
   2) հաստատել հայտերի գնահատման թերթիկները,
   3) գնահատել հայտերը, անհրաժեշտության դեպքում հրավիրել փորձագետ,

4) տալ առաջարկություն հայտերը ֆինանսավորման երաշխավորելու և ֆինանսավորման չափի մասին:

3. ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռ. Ասատրյան)՝

1) կազմակերպել տեղեկատվական խորհրդատվություն միջոցառման հայտ ներկայացնող կազմակերպությունների համար,

2) ընդունել ներկայացվող հայտերը, ստուգել դրանց համապատասխանությունը ֆինանսական աջակցության տրամադրման կարգի պահանջներին,

3) պատրաստել ՀՀ գիտության կոմիտեի նախագահի հրամանի նախագիծ ֆինանսական աջակցություն տրամադրելու և ֆինանսավորման չափի մասին,

4) կազմակերպել ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրի կնքումը,

5) կազմակերպել անցկացված միջոցառման հաշվետվության ընդունումը:

4. ՀՀ գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Շ. Աղաբեկյան)՝ ապահովել միջոցառման վերաբերյալ հայտարարության տեքստի և այլ տեղեկատվության հրապարակումը ՀՀ գիտության կոմիտեի ինտերնետային կայքում:

5. ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝

1) ապահովել ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրով նախատեսված միջոցների սահմանված կարգով տրամադրումը,

2) ստուգել անցկացված միջոցառման հաշվետվությամբ ներկայացված ֆինանսական միջոցների ծախսման համապատասխանությունը պայմանագրի նախահաշվին,

3) հաշվետվությունն ընդունելու մասին հանձնման-ընդունման արձանագրությունը տրամադրել ՀՀ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարին՝ ստորագրության:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված
ՀՀ ԳԿ նախագահի
«25» փետրվարի, 2022 թ.
N 03-Ա/Ք հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Մովսիսյան Արտուր	ՀՀ գիտության կոմիտեի նախագահի տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար)
Հովհաննիսյան Անուշ	ՀՀ գիտության կոմիտեի ԳԳԿՎ գիտական ծրագրերի իրականացմանն աջակցության բաժնի պետ
Սարգսյան Հարություն	ՀՀ գիտության կոմիտեի ԳԳԿՎ գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի պետ
Անանյան Ռուզաննա	ՀՀ գիտության կոմիտեի ԳԳԿՎ գիտական ծրագրերի իրականացմանն աջակցության բաժնի ավագ մասնագետ (աշխատանքային խմբի քարտուղար)